ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝_____/_____/

« »_____ _____ 2022թ.

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՐՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2022-2023 ուստարի

Նպատակները.

• Ապահով կրթական միջավայրի ստեղծում

•Մտավոր , սոցիալական հետաքրքրությունների ակտիվացում

• Առողջ ապրելակերպի խթանում

• Անհատական ստեղծագործական համընդհանուր հմտությունների և կարողությունների զարգացում

• Մրցունակ անձի ձևավորման ուղղված աշխատանքների կազմակերպում :

Խնդիրները.

• Նպաստել դասարանական թիմի ձևավորմանը և առաջին դասարանցիների զարգացման համար բարոյական և հուզական բարենպաստ միջավայրի ստեղծմանը:

• Զարգացնել սովորողների սոցիալական գործունեությունը, ինքնակառավարումը որպես հիմք միջտարիքային կառուցողական հաղորդակցության, սոցիալականացման, սոցիալական հարմարվողականության, յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական զարգացման համար:

• Մշակել գիտակից վերաբերմունք ուսման նկատմամբ, զարգացնել ճանաչողական գործունեությունը.

• Աշակերտների մեջ սերմանել առողջ ապրելակերպ վարելու ցանկություն, զարգացնել այդ ցանկությունը յուրաքանչյուր աշակերտի ներքին կարիքի մեջ:

• Սերմանել սեփական երկրում պատասխանատվության և հպարտության զգացում, նրա ազատությունն ու անկախությունը պաշտպանելու պատրաստակամություն.

• Ձևավորել սովորողների բնապահպանական գրագիտությունը, դաստիարակել մարդու և բնության փոխհարաբերությունների ըմբռնում;

Ակնկալվող վերջնարդյունքները.

• Հետաքրքրություն սեփական անձի նկատմամբ

• Ինքնաճանաչում որպես անհատ

• Ինքնակառավարում

• Հարգանք այլոց կարծիքների նկատմամբ

• Հետաքրքրասիրություն և ներգրավվածություն գործունեության մեջ

• Զգացմունքային կայունություն

• Գործողությունների և արարքների նկատմամբ հետաքրքրություն

Միասին ապրելու և սովորելու առաջնորդությունները.

• Կամքն ու գործը սքանչելի ծիլերը տալիս են:

• Յուրաքանչյուր մարդ աշխատանքով է ճանաչվում:

• Օգնեք դասընկերներին:

• Եղիր առողջ - ամեն ինչ կստացվի:

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Ի ա դասարանում սովորում են 34 աշակերտ՝ 15 տղա, 19 աղջիկ: Կենսուրախ և հետաքրքիր երեխաներն են, սիրում են աշխատել, վազվզել, նկարել,ծեփել, շատերը սիրում են մուլտֆիլ դիտել, իսկ խաղալ բոլորն են սիրում: Դասամիջոցները անցնում է աղմուկով, բայց խաղում են բոլորը միասին, ինչը խոսում է երեխաների միմյանց հետ համերաշխ լինելու մասին: Միմյանց նկատմամբ ուշադիր են և հոգատար: Իրար օգնում են և չկան դասարանում երեխաներ,որոնք իրար հետ չեն խոսում, կամ իրարից նեղացած են: Լսում են մեծերին:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքներըա/ դաս-դասարանային աշխատանքների կազմակերպում

բ/ դասեր դասարանից դուրս աշխատանքների կազմակերպում

գ/ դաս-հանդիպումներ նախասիրությունների բացահայտման համարդ/ դաս-դիտարկումներ շրջակա միջավայրը ճանաչելու համար

3. Հայեցի դաստիարակություն Հոգևոր դաստիարակություն

Ծանոթացնել պատմամշակութային հուշարձաններին, արթնացնել սեր և հոգատարություն դրանց հանդեպ: Զրուցել քրիստոնեության դերի,ազգապահպանության կարևորության և տարբեր ուղղությունների վնասակարության մասին: Կարևորել Առաքելական եկեղեցու դերը:

4. Գեղագիական դաստիարակություն

Զարգացնել աշակերտների գեղագիտական ճաշակը, ստեղծագործական միտքը, բացահայտելգեղեցիկը տեսնելու և ընկալելուունակությունները: Ծանոթացնել մշակութային արժեքներին:

5. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Սերմանել հայրենասիրություն, հանուն հայրենիքի բարօրության պայքարելու պատրաստակամություն: Զրուցել հայրենիքի նվիրյալների մասին, ծանոթացնել մեր հարուստ պատմական անցյալին

6. Ֆիզիկական դաստիարակություն

Կարևորել և գիտակցել ֆիզկուլտուրայի դասաժամերի մասնակցությունը, առօրյայում սպորտով զբաղվելը, ֆիզիկական առողջմարմին ունենալու անհրաժեշտությունը:

7. Աշխատանքային դաստիարակություն

Տանել աշխատանքներ և զրույցներ կազմակերպել աշխատանքնային դաստիարակության խթանման շուրջ:Հասնել նրան, որ երեխաները գիտակցեն, որ աշխատանքով է պայմանավորված մարդկության զարգացումը, առաջընթացը և բարեկեցիկ ապրելը:

8. Բնապահպանական դաստիարակություն

Երեխաները պետք է տեսնեն ու սեփական օրինակներով համոզվեն, որ բնության պահպանումը յուրաքանչյուր անհատի սուրբ պարտքն է:

Նրանք պետք է գիտակցեն, որ իրենք մասն են կազմում բնության և պետք է ակտիվ մասնակցություն ունենան շրջակամիջավայրի պահպանման ու զարգացման գործում:

9. Դպրոց և ընտանիք կապը

Կարևորել ընտանիքի և դպրոցի կապ՝ դերը մեծացնելով դպրոցի, որը մեծ նշանակություն ունի երեխաների դաստիարակության գործում: Ստեղծել դպրոց-ուսուցիչ-ծնող ամուր կապ՝ անձի ձևավորման, ճիշտ դաստիարակության համար:

Թեմաներ ծնող-ուսուցիչ ժողովների համար

N	Ժողովների թեմաները	Ժամանակի
1	Ձեր երեխան առաջին դասարանցի է: Նոր պարտականություններ՝ առաջին դժվարությունները	հոկտեմբեր
2	Սովորել ցուցադրելով և ոչ՝ պատմելով: Նոր պարտականություններ՝ նառաջին դժվարությունները:	դեկտեմբեր
3	Երեխայի դաստիարակության գործում հեքիաթներ, մուլտֆիլմերի և ուսուցաղական նհաղորդաշաների դերը:	մարտ
4	Թերթելով ուսումնական տարվա էջերը:	մայիս

Թեմաներ ծնողների խորհրդատվության

N	Թեմաներ	Ժամանակա հատված
1	Ծնողների ծանոթացում դպրոցի գործունեությանը:	
2	Զբաղվածություն դպրոցական ժամերից դուրս:	
3	Կրտսեր դպրոցականի ռեժիմ:	
4	Օգնել ծնողներին երեխաների համար ժամանցի կազմակերպման հարցում:	
5	Կրտսեր դպրոցականի վարքի դրսևորումները:	
6	Ուշադրության և ուշիմության մասին:	
7	Կարգապահություն և պատիժ:	
8	Սերմանել սեր ընթերցանության հանդեպ:	
9	Կրթություն առանց բռնության:	
10	Ամառային արձակուրդների կազմակերպում:	

Ակնկալվող վերջնարդյունքները.

1. Ծնողները ավելի կհետաքրքրվեն իրենց երեխաների դպրոցական կյանքով:

2. Երեխաները կսովորեն ապրել միասին:

3. Կձևավորվի ընտանիքի և դպրոցի փոխվստահություն և համագործակցություն:

Դասղեկի ժամ

Թեմատիկ պլան ՝ 30 ժամ

N	Թեմաներ	Կազմակերպման ձևը
1	Գիտելիքի օր: Դանդիսավոր և տոնական մուտք դպրոց:	Համադպրոցական միջոցառման մասնակցություն
2	Մենք սովորում ենք նույն դասարանում:	Ծանոթություն միմյանց հետ
3	Դպրոցական առօրյան:	Շրջայց դպրոցի տարածքում
4	Համադպրոցական կանոններ:	Ներկայացում
5	Ինչպես պետք է ինձ պահեմ արտակարգ իրավիճակներում:	Զրույց և ցուցադրություն
6	Առողջ սնունդ: Հիգիենայի կանոնների պահպանում:	Այցելություն ճաշարան, լվացարան
7	Աշխատում և սովորում ենք համագործակցելով:	Վարժություն՝ <<Պատառիկներ>> Պատմության ընթերցում
8	Արդյունավետ հաղորդակցում:	Վարժ.՝ <<Անթել հեռախոս>>
9	Ո՞վ և ինչո՞ւ է ընտրել իմ անունը	Զրույց և հետաքրքիր փաստերի ներկայացում
10	Կոնֆլիկտների հաղթահարում	Խաղ՝ <<Չեմ ուզում կռվել>>
11	Իմ իրավունքները և պարտականությունները	Պատմության ընթերցում Խաղ՝ <<Հաճելի է, հապելի չէ>>

12	Առողջ ապրելակերպ.	Հանդիպում բժշկի հետ
13	Իմ շրջապատի մարդիկ	Զրույց
14	Ամանորյա հրաշք	Դասարանի զարդարում
15	Հայոց բանակի օր	Ֆիլմի դիտում
16	Գրքերի աշխարհում	Այցելություն դպրոցական գրադարան
17	Գրքերի աշխարհում	Այցելություն հանրային գրադարան
18	Նախապատրաստվում ենք գարնանը	Սանիտարակն օր
19	Գարունը դասարանում	Դասասենյակի ձևավորում
20	Մասնակցություն համայնքի կյանքին	Այսելություն դպրոցամերձ այգի, աղբահավաքման աշխատանքի մասնակցություն
21	Շրջակա միջավայր	Ֆիլմի դիտում
22	Հանդուրժողականություն	Պատմության ընթերցում և քննարկում
23	Միջմշակութային փոխըմբռնում	Ցուցահանդեսի կազմակերպում
24	Միջմշակութային փոխըմբռնում	Ցուցահանդեսի կազմակերպում
25	Արդյունավետ հաղորդակցում	Խաղ՝ Ով է մեղավոր
26	Համագործակցություն	Գիրք ենք պատրաստում
27	Միջմշակութային փոխըմբռնում	Այցելություն նկարների ցուցահանդես
28	Իմ մշակույթը	Այցելություն քաղաքային թանգարան
29	Հրաժեշտ դպրոցին	Միջոցառման նախապատրաստում
30	Հրաժեշտ դպրոցին	Ցերեկույթի մասնակցություն

1. Հանդուրժողականության ուսուցում, Դասղեկի ձեռնարկ, 2008
2. Բնապահպանական կրթության և դաստիարակության ձեռոնարկ, Դասվարների ձեռնարկ, 2006